<<Էդիթ Պրինտ>> հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝

<<Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում>>

Հաստատություն՝ թ.130 մ/մանկապարտեզ

Դաստիարակ՝ Սյուզաննա Սակվանյան

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում……4

Մանկավարժությունը որպես գիտություն……..5

Ծես և ծիսակարգ…….....8

Եզրակացություն……25

Գրականության ցանկ ……..26

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ծեսն այն միջավայրն է, որտեղ բոլորը, ազգի մշակույթը յուրացրած, ինքնադրսևորվելու, ստեղծագործելու, որոնելու, հայտնաբերելու, երևակայելու, իմացածը կիրառելու լայն հնարավորություն ունեն: Ծեսը, որպես միասնական, բազմաբնույթ, ինտեգրված գործունեություն, նպաստում է նախակրթարան, ընտանիք, համայնք արդյունավետ համագործակցությանը:Ծեսի յուրացման, կրթության, ըմբռնման հիմքը անհրաժեշտ է դնել դեռ վաղ տարիքից՝ այսինքն նախակրթարանից:

Նախակրթարանում ծեսի միջոցով սանի զարգացման գործընթացն արդյունավետ է, այն իր մեջ ոչ միայն ներառում է երեխայի համար կարևոր գործունեության ձևերը, այլև իրագործվում է լավագույն ազգային նյութով:

Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Ուսուցման համակարգի հենց առաջին օղակից՝ մանկապարտեզից է սկսվում մանկան աշխարհաճանաչմանն ուղղված տարրական գիտելիքների յուրացումը: Հիմնականում այստեղ է ձևավորվում նրա վերաբերմունքը աշխարհի, մարդկանց, շրջապատի և վերջապես գեղեցկության նկատմամբ:Այստեղ է, որ նրա մեջ սերմանվելու են մարդուն այսօր այնքան անհրաժեշտ բարության առաջին հատիկները:Հայ երեխայի հոգում բարության և առաքինության առաջին սերմնացանը քրիստոնեական տարրական գիտելիքների ուսուցումն է:

Հայ երեխային հայեցի կրթությունը և դաստիարակությունն այնքան են անհրաժեշտ, որքան մեսրոպյան այբուբենը՝ հայոց լեզուն իմանալու համար:

Մենք՝ մանկավարժներս, պարտավոր ենք ըստ արժանվույն կատարել մեզ վստահված գործը, այսինքն՝ հայ մանուկներին դաստիարակել հայեցի և քրիստոնեաբար:

Մենք՝ հայերս, մեր չմարվող հիշողությունն արյան միջոցով փոխանցել ենք սերնդեսերունդ: Մենք մեր հիշողության, մեր պատմության տերն ենք ու ժառանգորդը՝ Հայկ Նահապետից մինչև հավերժություն: Ուստի պետք է ուժ առնենք մեր ազգային մեծագույն մանկավարժներից՝ Խ.Աբովյանից, Մ. Նալբանդյանից, Ռ.Պատկանյանից և Ղ. Աղայանից: Նրանցից վերցնենք այն լավագույնը՝ ազգային մտածողության մանկավարժական շարժառիթներն ու ուղենիշները, որոնք այսօր էլ արդիական են:

Երախայի աշխարհընկալման, գեղագիտական ճաշակի և այդ ոլորտում տարրական պատկերացումների ձևավորման տեսակետից առանձնահատուկ նշանակություն ունեն ազգային սովորույթները, ընտանեկան հանդիսությունները, տաղավար տոներին նվիրված հետաքրքիր միջոցառումները:

Փորձը ցույց է տալիս, որ երեխայի գեղագիտական դաստիարակության իմաստով անգնահատելի նշանակություն ունեն ծիսական, ընտանեկան, ժողովրդական, ազգային հանդիսությունների մանկականացված միջոցառումները: Դրանք սրտամոտ են երեխային, քանի որ նա այս դեպքում դառնում է մասնակից ու կատարող: Նա արդեն պատկերացում ունի դրանց վերաբերյալ և մեծ սիրով ու ոգևորությամբ մասնակցում է այդ հանդիսություններին, հաճախ էլ լրացումներով ու հիշեցումներով օգնում դաստիարակին

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժությունը գիտություն է անձի ձևավորման ու զարգացման օրինաչափությունների, կրթության, ուսուցման և դաստիարակության ձևերի, մեթոդների ու բովանդակության մասին: Մանկավարժությունը որպես գիտություն զբաղվում է սերունդների կրթության, դաստիարակության զարգացման հիմնախնդիրներով: Մանկավարժության անբաժանելի մասն են կազմում նախադպրոցականի դաստիարակության մասնավոր մեթոդիկաները.

- երեխայի խոսքի զարգացման տեսությունը և մեթոդիկան
- երեխայի ֆիզիկական դաստիարակության տեսությունը և մեթոդիկան
- երեխայի երաժշտական դաստիարակության տեսությունը և մեթոդիկան
- երեխայի մաթեմատիկական պատկերացումների զարգացման տեսությունը և մեթոդիկան
- նախադպրոցականի էկոլոգիական կրթության տեսությունը և մեթոդիկան

Նախադպրոցական կրթությունը կրթական համակարգի առաջին օղակն է, որի հաջողություններով է պայմանավորված ողջ կրթական համակարգի առաջընթացը: Կրթական ցանկացած բարեփոխում սկիզբ է առնում և փորձարկվում է նախադպրոցական կրթության ոլորտում:

Նախադպրոցական մանկավարժության հիմնական գործառույթներն են.

- նախադպրոցական կրթության համակարգի զարգացման ուղությունների կանխատեսումը և նախագծումը
- նախադպրոցական կրթության չափորոշիչի մշակումը
- նախադպրոցական դաստիարակության հայեցակարգի, նոր մոտեցումների և տեխնոլոգիաների մշակումը
- նախադպրոցականի ուսուցման և կրթության տեսության և մեթոդիկայի կատարելագործումը,
- ուսուցման ժամանակահունչ եղանակների մշակումը;
- նախադպրոցականի համակողմանի զարգացման մանկավարժական պայմանների ապահովումը
- «ընտանիք-մանկապարտեզ» հարաբերությունների լրամշակումը, համագործակցության նոր եզրերի մշակումը

Ամփոփելով նախադպրոցական մանկավարժության գործառույթները, կարելի է նշել, որ դրանք կրթող, դաստիարակող և ուսուցանող բնույթի են և ուղղված են

նախադպրոցականի լիարժեք ֆիզիկական, հոգեկան և սոցիալական զարգացմանը: Նախադպրոցական մանկավարժության գործառույթներից օրինաչափորեն առանձնացվում են նախադպրոցական մանկավարժության նպատակն ու խնդիրները: Նախադպրոցական մանկավարժության օբյեկտն է՝ երեխան ծնվելուց մինչև նախադպրոցական տարիք ընկած ժամանակահատվածը, որի զարգացումը պայմանավորված է դաստիարակչական հարաբերություններով: Նախադպրոցական մանկավարժության **խնդիրներն** են՝

- նպաստել երեխաների դաստիարակությանն ու ուսուցմանը ծվելուց մինչև դպրոցական տարիք (տեսական և պրակտիկ ասպեկտ) ժամանակակից հասարակության պահանջներին համապատասխան
- ուսումնասիրել կրթական գործընթացի տենդենցներն ու հեռանկարները, որպես երեխաների ուսուցման և դաստիարակության հիմնական ձև
- մշակել նախադպրոցական տարիքի երեխաների ուսուցման և դաստիարակության նոր հայեցակարգեր և տեխնոլոգիաներ:

Անդրադառնալով նախադպրոցական գործառույթներին և խնդիրներին պետք է նշել **խաղի** դերը **խաղային գործունեությունը** երեխայի կյանքում:Նախադպրոցական տարիքում ի հայտ եկող մի շարք պահանջմունքներ չափազանց կարևոր են այն առումով, որ խթանում են երեխայի ընդհանուր զարգացումը: Խաղը զարգացնում է երեխայի ուշադրությունը, հիշողությունը, երևակայությունը, ստեղծագործելու կարողությունը, հաղորդակցման (կոմունիկատիվ) կարողությունը, շարժողականությունը, ակտիվությունը, ընկալումը, շոշափելու, ուսումնասիրելու, իր դիտողությունները հաղորդելու կարողությունը, երևույթների մեջ կապ գտնելու կարողությունը, ճիշտ կողմնորոշվելու կարողությունը, շարժումներին տիրապետելու կարողությունը, լսելու կարողությունը, դիտելու և կրկնելու կարողությունը, ինքնատիրապետումը, ինքնուրույն աշխատելու կարողությունը, վերլուծելու, համադրելու կարողությունը, հարստացնում է բառապաշարը:

Խաղը երեխայի համար սոցիալական հասունացման ուղի է:Խաղի ժամանակ երեխաներն առաջին անգամ շփվում են իրենց հասակակիցների հետ:Նրանց միացնում են ընդհանուր նպատակը , դրան հասնելու միասնական ջանքերը, ընդհանուր նպատակը , դրան հասնելու միասնական ջանքերը, ընդհանուր հետաքրքրություններն ու ապրումները:Երեխան սկսում է զգալ իրեն որպես ընդհանուր խմբի անդամ, արդարացիորեն գնահատել իր և ընկերների գործողություններն ու արարքները:Խաղի մեջ մտավոր ակտիվությունը միշտ

շաղկապված է երևակայությանը , երեխան պետք է իր համար դեր գտնի: Երևակայությունն ի հայտ է գալիս այն ժամանակ , երբ երեխան փնտրում է իր մտադրությունն իրականացնելու միջոցներ.թռիչքի գնալուց առաջ պետք է ինքնաթիռ պատրաստել, խանութի համար համապատասխան ապրանքներ ընտրել, իսկ եթե դրանք պակասում են՝ ինքնուրույն պատրաստել:Այսպես՝ խաղի միջոցով , դրսևորվում են և զարգանում երեխայի ստեղծագործական ունակություններն:Խաղերը լինում են **սյուժետադերային, դիդակտիկ, զարգացնող, թատերականացված** և իհարկե չմոռանանք նշել **ծիսական խաղերը:** Հատկանշական է այն , որ հիմա Հայաստանում կարելի է ասել մոռացության են տրվել մանկական բակային, ազգային, ծիսական խաղերը: Ծիսական խաղերը չեն համարվում ժամանցային, ծիս. Խաղերը լուծում են այն խնդիրները որոնք դրված են երեխայի զարգացման ընթացքի վրա՝ երեխաներն ծանոթանում են ազգային ծիսական խաղերին՝ զարգացնելով մտքի ճկունությունը, երևակայությունը, հիշողությունը, ուշադրությունը, կամքը և իհարկե նպաստում դրանց զարգացմանը:

ԾԵՍ ԵՎ ԾԻՍԱԿԱՐԳ

Ծեսը ավանդական կամ սահմանված կանոներով կատարվող արարողություն է համարվում:
Եթե մշակույթի ժառանգորդման առաջին ձևը համարենք ծեսը, ապա երկրորդը **ծիսակարգն** է:Այն ներառում է ավանդական գործողություններ, որոնք ուղեկցում են մարդուն, հանրությանը , կյանքի և գործունեության կարևոր պահերին:Ծիսակարգը մարմնավորում է մարդկանց վարքի տարբեր կողմերը:Ծիսակարգին դիմում են միայն հատուկ իրավիճակներում (ծնունդ, կնունք, պսակադրություն, մահ և այլն):

Ծեսը և էկոլոգիական դաստիարակությունը երեխաների համար ավելի հստակ, պարզ , հասկանալի դարձնելու համար այդ երկուսը կարելի է համատեղել և կազմակերպել ծիսական խաղեր բնության գրկում՝ ավետելով բնության զարթոնքը(գարուն): Բնության զարթոնքին առնչվող ծեսերի շարքն շատ են, բայց առանձնացնեմ երկուսը՝ **Ծաղկազարդ(Ծառզարդար), Սուրբ Զատիկ;**

Քրիստոնեական տաղավար տոներից երկուսը՝ Զատիկը և Ծաղկազարդը մանկապարտեզում վերածվում են մի շքեղ հանդիսության, որոնք իսկական հայեցի դաստիարակության հրաշալի օրինակներ են: Կարևոր է, որ տոնակատարությունների կազմակերպիչները պահպանեն ծիսակարգը և երեխաներին ընկալելի դարձնեն դրա բովանդակությունն ու աստվածային խորհուրդը:

ԾԱՂԿԱԶԱՐԴ (ԾԱՌԶԱՐԴԱՐ)

Հնագույն շրջանում հայ ժողովուրդն ունեցել է խնկենու, սոսու, կաղնու, չինարենու, ուռենու պաշտամունք՝ որպես տիեզերքի ներդաշնակության, անմահության, պտղաբերության, կենաց ծառի խորհրդանիշ: Մեր նախնիները Ատիս աստվածուհու տոնին նվիրված օրը, առավոտյան վաղ, արևից առաջ գնում էին սրբազան անտառ և ծիսակատարությամբ ծառից պոկում մի ճյուղ: Ծառը զարդարում էին շորի պատառիկներով, պտուղներով: Եղել է տոն, որը ժողովուրդն անվանել է Ծառզարդար, որը խորհրդանշել է գարնան գալուստը:

Աստվածաշնչի մեջ կարդում ենք. «Եվ Տեր Աստված արևելյան կողմը՝ Եդեմի մեջ, պարտեզ տնկեց՝ «Եդեմի պարտեզը», ու իր շինած մարդը հոն դրեց: Եվ Տեր

Աստված պարտեզին մեջտեղը Կենաց ծառը՝ Բարին ու Չարը գիտենալու ծառն էլ բուսցուց»:

Քրիստոնեության շրջանում վերաիմաստավորված կենաց ծառը նույնացվել է Աստվածածնի հետ, այն առնչվում է խաչի, խաչափայտի, դրախտի հետ:

Զատիկից մեկ շաբաթ առաջ Հիսուսը, ավանակի վրա նստած, իր աշակերտների հետ մտավ Երուսաղեմ: Ժողովուրդը նրան ցնծությամբ դիմավորեց. մարդիկ իրենց զգեստներն ու արմավենու ճյուղեր էին փռում Հիսուսի ոտքերի տակ և գոչում.«Օրհնությու՛ն Դավթի Որդուն, օրհնյա՛լ է Նա, ով գալիս է Տիրոջ անունով: Խաղաղությու՛ն երկնքում և փա՛ռք բարձունքներում»:

Ծաղկազարդը (Ծառզարդար) Մեծ Պասի նախավերջին կիրակնօրյա տոնն է: Այդ օրը եկեղեցիներում Ս. Պատարագ է մատուցվում, մարդիկ ուռենու բողբոջած ճյուղերն օրհնել են տալիս հոգևորականներին և տանում իրենց տուն: Ինչպես Պաղեստինում ձիթենիներն ու արմավենիները, այդպես էլ Հայաստանում տարվա այդ ժամանակ բողբոջում են ուռենիները, բարդիները: Ուռենու ճյուղերը խորհրդանշում են այն արմավենու ճյուղերը, որոնք հրեաները փռում էին Հիսուսի ոտքերի տակ, երբ նա մտնում էր Երուսաղեմ:

Նորապսակ երիտասարդները, նշանված տղաները շաբաթ լույս կիրակի կեսգիշերին, արմատախիլ էին անում նոր բողբոջած ուռենիները, ճյուղերը զարդարում գույնզգույն լաթի կտորներով, թելի վրա շարված չամչահատիկներով, մրգերով, եռասայր մոմերով: Նրանք եկեղեցի էին շտապում: Առաջինը տեղ հասնողը խփում էր զանգը, մյուսները գնում էին քահանային արթնացնելու: Ողջ եկեղեցին զարդարում էին ուռենու բողբոջած ճյուղերով, մի մեծ կույտ ճյուղեր էլ դարսում էին կենտրոնում: Եկեղեցու մուտքը ամբողջովին «հավաքում» էին ծաղկե շրջանակով: Նշանված տղաները զարդարված ծառերով կանգնում էին իրենց հարսնացուների առաջ: Մերձավոր կանանցից մեկը ծառի վրա եռասայր մոմ էր վառում ու ընծաներ տալիս նշանվածներին: Այդ ընթացքում անչափահաս տղաներն ու պատանիները, ձեռքերին զանազան ինքնաշեն խաղալիքներ՝ ճեռեր, կարկաչաներ, ճոճանակներ պտտացնելով, աղմուկով էին լցնում եկեղեցին:

Ճոճանակը ձեռքի թաթի չափ, կոթով մի տախտակ է, որի երկու կողմից թույլ կապած են մի-մի տախտակ, որոնք շարժելու, ճոճելու ժամանակ զարկվում են միջին տախտակին:

Կարկաչան բռնցքաչափ խորանարդ է, որ տախտակից է պատրաստվում: Տախտակներից մեկը կոթավոր է լինում, որից և բռնում էին ցնցելու համար: Մի քանի տախտակները վերջանում էին ելուստներով: Մեջը փայտե կամ այլ գնդիկներ էին լցնում, որոնք ցնցումների ժամանակ ձայներ էին հանում:

Ճեռը փայտե ատամնավոր գլան է՝ երկար կոթով: Գլանի երկու կողմերից տախտակներ են անցկացրած, որոնք միանում են ուրիշ երկու տախտակներով, գոտիներով: Մի ուրիշ բարակ տախտակ էլ մի ծայրով հենվում է գլանի ատամների վրա, իսկ մյուս ծայրով, անցնելով երկրորդ գոտիով, ամրանում է առաջի գոտու վրա: Գլանը պտտեցնելիս լեզվակն ընկնում է ատամից ատամ և սուր ձայն բարձրացնում:

Այդ գիշեր Քեսապում յոթը բուրավետ ծաղիկներ էին դնում ջրի մեջ, որ գիշերվա ընթացքում խիստ զորավոր պիտի դա

Կիրակի առավոտյան մի լաթի կտորի վրա յոթ շար շուլալ կար էին անում, յոթը թելերը ծայրում յոթ անգամ կապ գցում և լաթը նետում պարտեզ: Առավոտյան լվացվում էին «Յութնյուս»-ի ջրով:

Գալիս էր քահանան, հնչում էին եկեղեցու զանգերը՝ հրավիրելով ուշացածներին: Եկեղեցի եկողները շրջապատում էին ուռենու ծառերը, իրենց հետ բերած մոմերը

վառելով՝ կպցնում դրանց ճյուղերին և, հարյուրավոր մոմերի պայծառ լույսի տակ, կեսգիշերին սկսվում էր ուռենու ճյուղերն օրհնելու ծեսը: Այդ գիշեր, հաճախ, ողջ Մեծ պասի ընթացքում առաջին անգամ, նախնական համաձայնությամբ, նոր զույգերի նշանադրություն էր կատարվում: Եկեղեցում տղայի մայրը ընտրած աղջկա մատին մատանի էր դնում, գլխին՝ գլխաշոր գցում, որից հետո վերջինս նշանված էր համարվում:

Օրհնված ճյուղերով և վառված մոմերով մարդիկ շտապում են գերեզմանատուն, մոմերն ամրացնում իրենց հանգուցյալի գերեզմանաքարին, իսկ օրհնված ճյուղերը տանում էին տուն: Այդ ճյուղերին վերագրվում էր չարխափան, առատացնող զորություն: Մի մասը գցում էին ալյուրի ու ցորենի ամբարների մեջ, իսկ մի մասն էլ՝ հացահատիկի հորերի մեջ, որ այդ տարին առատ բերք լինի, լցվեն ամբարներն ու հորերը: Թեթևակի խփում էին անասուններին, դրանցով հյուսված օղակի միջով անցկացնում էին հավերին, որ գեր լինեն: Խփում էին միմյանց մեջքին ու ասում. «Մեջքը տեղը, կամքը տեղը», «Քամու տեղ, սրտի դեղ»,- հուսալով, որ հիվանդությունները կանցնեն:

Այդ օրը բոլորը պիտի հատիկ ուտեին, նվիրաբերեին տուն այցելող երեխաներին: Տանտիկինները մեծ քանակությամբ խաշած ցորենից, սիսեռից, չամիչից ու շաքարահատիկներից «հատիկ» էին պատրաստում: Երեխաները՝ երկու-երեք հոգով, երբեմն՝ ավելի մեծ խմբով, ձեռեր ճռռացնելով, կարկաչաներ, ճոճանակ շրխկացնելով, օղակած ուռենու ճյուղեր, մի-մի դույլ ու տոպրակ առած՝ շրջում էին տնետուն, ծաղկազարդի երգեր երգում և որպես պարգև ձու ու հատիկ ստանում: Բասենում, օրինակ, երգում էին.

Կարկաչա, կարին քյաչա,

Սև եզան սև սամոդա,

Կարմիր կովը շատ եղ կուտա,

Ով որ ընձի հավկիթըմ տա՝

Աստված իրեն հազար թող տա:

Մակվեցիները երգում էին.

Կարկաչա, կարինկաչա,

Սև եզան սև սամաթեռ,

Կարմիր եզան օղն ու կոճակ,

Ով որ չտա իմ երկու ձուն,

Մուկն ու կատուն՝ իրենց թթուն,

Ով որ կտա իմ երկու ձուն,

Աստված պահե իր փեսացուն:

Աշտարակում հայտնի Ծաղկազարդի երգն էր.

Անակ, անակ, ճոճանակ,

Աստծո դուռը բանանք,

Մտնենք ժամ անենք,

Դուրս գանք, պատարագ անենք,

Չալ եզը մորթենք, մատաղ անենք,

Պոզերը չարդախ անենք,

Միջին նստենք, քյարգահ անենք,

Մատաղ սիրողը երկու ձու տա,

Զատկին խաղանք, քեֆ անենք,

Մինն ինձի, մինն իմ ընկերին,

Ով որ տա՝ զիզի բարձին նստի,

Ով չտա՝ չոր քարին նստի:

Շրջում էին այնքան, մինչև դույլերը ձվով լցնեին: Փոխարենը տալիս էին օրհնված ուռենու մեկական ճյուղ:

Ալեքսանդրապոլում երգում էին.

Ճըռ, ճըռ, ճըչեռնակ.

Ասծո հալալ պիպեռնակ,

Ընկերս ընկավ ծովը,

Ծովեն ելավ ծիրանա,

Խունկ առեք, մոմ առեք,

Տասներկու պատարագ արեք,

Իմ կարմիր հավին հավկիթը դուրս բերեք,

Ով որ բերե՝ շեն մնա,

Ով չբերե՝ հավի փորին դեմ կենա:

Բալուում խաղում էին ծաղկազարդին բնորոշ խաղ: 10 – 12 տարեկան տղաները նախապես հավաքում էին ուռենու կամ բարդու երկար ձողեր, կարմիր ներկում դրանք: Խաղացողներից մեկը իր ձողը շեղակի դեմ էր անում պատին, մյուսն իր ձողով հարվածում էր: Կոտրվածը հաղթողին էր բաժին ընկնում: Առավոտից երեկո խաղացողների հարվածների ձայնն էր լսվում և հաղթողների հաղթական գոչյունները: Կոտրվածները պահում էին Զատիկի թանապուրի տակ այրելու համար:

Այնուհետև Մեծ պասի ավարտին մնում էր մեկ շաբաթ, որը կոչվում էր «Ավագ կամ Մեծ շաբաթ»: Այդ օրերին եկեղեցին հիշատակում է Հիսուսի երկրավոր կյանքի վերջին ընթրիքը, մատնությունը, չարչարանքը, խաչելությունն ու թաղումը: Սրան զուգահեռ հասարակ ժողովուրդն ուներ իր արարողությունների կարգը: Ավագ շաբաթվա օրերից յուրաքանչյուրն ուներ իր անունը և, ըստ այդմ, իր բնորոշ դեմքը:

Հուշիկ, հուշիկ երկուշաբթի,

Երեքշաբթի՝ քարքաշիկ,

Չիք չորեքշաբթի

Ավագ հինգշաբթի,

Հուդայի ուրբաթ,

Զատկի շաբաթ,

Ախարի կիրակի,

Երկուշաբթի՝ մեռելոց,

Կանաչ – կարմիր կիրակի:

Երկուշաբթին ջրաղացպանների օրն էր: Այդ օրը բոլորը պիտի ցորեն աղային: Ավագ երկուշաբթին խորհրդանշում է արարչության երկրորդ օրը, երբ Աստված ջրերը բաժանեց միմյանցից և արարեց երկնքի հաստատությունը: Այդ օրը խորհրդանշում է նաև երկրորդ շրջանը, երբ ապականվեց ամբողջ տիեզերքը, և միայն Ենոքը հաճելի եղավ Աստծուն ու երկինք փոխադրվեց (Ծննդ. Ե 21-24):

«Այս օրը Քրիստոսն անիծեց անպտուղ թզենին, և սա իսկույն չորացավ (Մատթ. ԻԱ 18-22): Անպտուղ թզենին օրինակն է ճշմարիտ հավատք ու բարի գործեր չունեցող մեղավորների, ովքեր պատժվելու են վերջին օրը աստվածային հրամանով»:

Երեքշաբթին հիմար – իմաստունի վիճակը քաշելու և խնոցի հարելու օրն էր: Մարդիկ շտապում էին եկեղեցի՝ գուշակելու իրենց մտադրությունը: Տասը թղթակտորներից հինգի վրա գրվում էր «իմաստուն», հինգի վրա՝ «հիմար» բառերը:

Տասը երեխա վերցնում էին մեկական թուղթ: Մտքում որևէ իղձ պահած անձինք նախապես ընտրում էին երեխաներից որևէ մեկին: Եթե իր ընտրած երեխային ընկնում էր «իմաստուն» բառը, ուրեմն նշանակում էր իղձի իրականացում, իսկ «հիմար»-ի դեպքում՝ տապալում:

Կանայք առավոտից երեկո խնոցի են հարել: Այդ օրն այնքան խնոցի է հարվել, որքան չի հարվել Մեծ պասի անցած բոլոր օրերին: Պատրաստված կարագի մի մասը, անալի թողնելով, պահել են կճուճներում, որ հինգշաբթի օրը օրհնել տան, այլապես կովերը կաթից կկտրվեն:

«Ավագ երեքշաբթին պատկերն է արարչության երրորդ օրվա, երբ Աստված երկրի վրա դալար բույսեր և պտղատու ծառեր աճեցրեց: Աստված զգալի (նյութական) ծառերի հետ միասին տնկեց նաև իմանալի (հոգևոր) ծառեր՝ արդարների ու սուրբ

մարգարեների դասերը, ինչպես վկայում է Պողոսը. «Աստված ընտրեց մեզ Քրիստոսի միջոցով նախքան աշխարհի արարումը» (Եփես.Ա.4):

Ավագ երեքշաբթին նաև երրորդ ժամանակաշրջանի խորհուրդն ունի, երբ ջրհեղեղը ողողեց ամբողջ աշխարհը, և Աստված մարդկանց լեզուները խառնելով՝ նրանց տարածեց աշխարհով մեկ (Ծննդ. է - ԺԱ)»:

Չորեքշաբթի հիմնովին մաքրել են տները, ամեն վատ, չար, պիղծ, հիվանդություն, կեղտ «չիք են արել»: Շուշեցի աղջիկները այդ օրը խաշխաշ հարելու քարը գետնին են քսել ու ասել.

Չիք, չիք, մուկը չիք,

Չիք, չիք, լուն չիք,

Չիք, չիք, կարիճը չիք,

Չիք, չիք, չարակամը չիք,

Չիք, չիք, հիվանդությունը չիք,

Չիք, չիք, օձը չիք...

Զանգեզուրում չիքը հարց ու պատասխանի ձևով էր արվում: Նախ՝ ամբողջ տունը դատարկել են, ապա կանանցից մեկը, քարը ձեռքն առած, բարձրացել է կտուրն ու երդիկի մոտ կանգնել, իսկ մյուսը՝ տան ներսում՝ երդիկի տակ: Տանիքին կանգնածը քարը տանում էր բերում երդիկի շուրջն ու հարցնում.

* Աղամ, աղամ...ի՞նչն աղամ:

* Մուկն աղա:

* Աղամ, աղամ...ի՞նչն աղամ:

* Քունջ ու պուջախի տակերն աղա...

Մարդիկ հմայական արարողությամբ ձգտել են ոչնչացնել չարը, անցանկալին:

«Այդ օրը հիշատակն է արարչության չորրորդ օրվա, երբ Աստված լուսատուներ դրեց երկնքի հաստատության ներսում և դրանով տվեց Արդարության Արեգակի՝ Քրիստոսի ծննդյան ավետիսը: Ավագ չորեքշաբթին նաև պատկերն է չորրորդ ժամանակաշրջանի, երբ Աբրահամը ստացավ Իսահակի ծննդյան ավետիսը (Ծննդ. ԺԸ), հրեաները Եգիպտոսից դուրս եկան (Ելք. ԺԲ - ԺԴ), Վկայության խորանը

պատրաստվեց (Ելք.ԻԵ - ԻԷ), և Իսրայելի որդիներն Ավետյաց երկիր փոխադրվեցին (Հեսու Ա - ԺԹ):

Ավագ չորեքշաբթի օրը հիշատակն է նաև Տիրոջ մատնության, որ կատարվեց Նրա աշակերտ Հուդայի կողմից՝ քահանայապետերից ստացած 30 արծաթի դիմաց (Մատթ. ԻԶ 14-16)»:

Ավագ հինգշաբթի այգեպանները, վերցնելով կացինը, այգի են մտել և, վատ բերք տվող ծառերի բնին կացնի բութ կողմով երեք անգամ հարվածելով, վախեցրել. «Բար ես տալու, տուր, թե չէ՝ կկտրեմ»:

Առավոտյան, ի հիշատակ Քրիստոսի ու իր տասներկու աշակերտների խորհրդավոր ընթրիքի, եկեղեցում պատարագ է մատուցվել: Երեկոյան եկեղեցում ոտնլվայի արարողություն է կատարվել՝ ի հիի հիշատակ Քրիստոսի ձեռքով իր աշակերտների ոտքերը լվանալու արարողությանը: Օրհնվել է յուղը, որը ձեռքին պահած տարել են տուն՝ յուղի պուլիկի, խնոցու մեջ գցելու, կովի պտուկներին քսելու՝ վերջինիս կաթնատվությունն ու յուղի առատությունը ապահովելու ակնկալիքով: Ժամերգությունից հետո տեղի է ունեցել նաև Քրիստոսի չարչարանքի ու խաչելության ծիսական արարողությունը, որն հայտնի է «Խավարում», «Խավարման գիշեր», «Սգի գիշեր» անուններով: Եկեղեցում 13 մոմեր են վառել, ապա՝ զույգ-զույգ մարել՝ Ավետարանը կարդալու, շարականներ երգելու ընթացքում: Միայն մեկը՝ մեջտեղի մոմն է վառված մնացել՝ խորհրդանշելով մենակ մնացած Քրիստոսին:

Հինգշաբթի գիշերը դարբինները, մի ոտքի վրա կանգնած, բոլորովին լուռ, մինչ այդ յոթ ամրոցի դռներից հավաքած երկաթի կտորտանքներից փոքրիկ մատանիներ, ապարանջաններ, հմայիլներ(ուրբաթարուրք) են շինել՝ հաջորդ օրը եկեղեցու դռանը կանգնած՝ անխոս վաճառելու նպատակով:

Ավագ հինգշաբթի օրը նաև Զատկի ձվերը ներկելու օրն էր: Ներկում էին առայժմ սահմանափակ թվով ձվեր, ընտանիքի անդամների թվին հավասար կամ յոթ հատ, դրանցով պիտի թաթախվեին, իսկ բուն Զատիկի համար նախատեսվող հսկայական քանակությամբ ձվերը պիտի ներկվեին - եփվեին շաբաթ օրը: Ներկում էին միայն կարմիր գույնով: Շատ տեղերում հավատում էին, որ Զատկի հինգշաբթի օրը ներկած ձու ուտողների ատամները չեն ցավի:

«Ավագ հինգշաբթի օրը պատկերն է արարչության հինգերորդ օրվա, երբ Արարիչը ստեղծեց ձկներին ու թռչուններին:

Այս օրն ունի նաև հինգերորդ ժամանակաշրջանի խորհուրդը, երբ Իսրայելի զավակները կերան զատկական գառը, մկրտվեցին ամպի ու ծովի մեջ, անապատում կերան երկնքից իջած մանանան և ըմպեցին վիմաբուխ աղբյուրից (Ելք. ԺԲ, ԺԴ, ԺԶ, ԺԷ):

Ավագ հինգշաբթի օրը Տերը գալիս է Վերնատուն, որը Եկեղեցու օրինակն է, այնտեղ ուտում զատկական գառը, լվանում է Իր աշակերտների ոտքերը (սրա հիշատակն ենք նշում եկեղեցում այս օրը կատարվող Ոտնլվա արարողությամբ, որի վերջում հավատացյալներին օրհնված յուղ է բաժանվում հիվանդությունների պարագային գործածության համար), նրանց հաղորդ դարձնում Իր Մարմնին ու Արյանը՝ այսպիսով հաստատելով սուրբ Պատարագի խորհուրդը, իսկ գիշերը ելնում է Ձիթենյաց լեռ, Իր աստվածային գլուխը գետին խոնարհելով՝ աղոթում Հորը և ձերբակալվում (Մատթ. ԻԶ 17-46): Տերը նախ լվաց աշակերտների ոտքերը, ապա տվեց Իր Մարմինն ու Արյունը՝ կամենալով նախ սրբել նրանց ադամական մեղքից և հետո տալ սուրբ Խորհուրդը:

Ավագ հինգշաբթի օրը, երբ Տերը Վերնատանը նստեց Իր աշակերտների հետ, խորհրդանշում է Քրիստոսի՝ Իր փառքի աթոռին նստելն Իր տասներկու աշակերտների հետ:

Ավագ հինգշաբթի երեկոյան եկեղեցիներում կատարվում է Խավարման արարողությունը, որն արդեն վերաբերում է Ավագ ուրբաթի խորհրդին՝ Տիրոջ ձերբակալությանը, չարչարանքներին, խաչելությանն ու մահվանը, և Խավարում է կոչվում այն պատճառով, որ Հիսուսի խաչելության ժամանակ արևը կեսօրին խավարեց մինչև ժամը երեքը, երբ Հիսուսը հոգին ավանդեց (Մատթ. ԻԷ 45-50)»:

Ուրբաթ օրը, ըստ եկեղեցական տոնացույցի, Քրիստոսի խաչվելու օրն է, ուստի սգի օր էր: Ավագ ուրբաթ պատարագ չի մատուցվել, որովհետև այդ օրը Քրիստոսն ինքը պատարագվեց (զոհաբերվեց): Եկեղեցում ճաշու վեցերորդ ժամին հանդիսավոր թափորով կատարվել է Քրիստոսի խաչելության կարգը, իսկ երեկոյան՝ թաղման կարգը:

Ի նշան սգի՝ ուրբաթ օրը մարդիկ չեն լվացվել, ի հիշատակ Քրիստոսի չարչարանքի՝ ոչ միայն այս, այլև մնացյալ ուրբաթ օրերն էլ պաս են պահել:

Վաղ առավոտյան բոլոր հայ դարբինները, առանց խոսելու, գնում էին դարբնոց և երեք կամ յոթ անգամ մուրճով հարվածում զնդանին, որ Արտավազդի շղթաները

հաստանան և նա չկարողանա դուրս գալ քարանձավից ու քանդի, տակնուվրա անի աշխարհը: Դարբիններն ու ոսկերիչները այդ օրը նաև մեծ քանակությամբ չարարգել նշաններ էին պատրաստում, որոնք հայտնի էին «ուրբաթաթուր» և «անժմի» անունով: Դրանք մեծ մասամբ երկաթե փոքրիկ օղեր, մատանիներ, ապարանջաններ էին, որոնք մայրերը գնում էին իրենց զավակներին չար աչքից զերծ պահելու համար և կարմիր-կանաչ թելերով կարում նրանց բաճկոններին, հագցնում մատին, կախում օրորոցներից: Միևնույն ժամանակ շորերի մեջքին, վերնաշապիկի վրա թելերով ճյուղանման նախշակարել են, իսկ կտորներով՝ խաչ կարել: Մարդիկ գույնզգույն թելեր կամ կտորներ են տարել եկեղեցի, օրհնել տվել: Եվ այս բոլորը նրա համար, որ ազատվեն չարից, փորձանքից, հեռու մնան չար աչքից, կայծակից:

Ուրբաթ գիշերը եկեղեցում էին անցկացնում, սգո, տառապանքի, լացի ու վշտի մթնոլորտում:

«Ավագ ուրբաթը խորհրդանշում է արարչության վեցերորդ օրը, երբ Աստված հողից արարեց Ադամին, Իր պատկերով ու նմանությամբ, իսկ հետո ստեղծեց Եվային և նրանց դրեց Դրախտում: Ուրբաթ օրը Ադամն ու Եվան կերան արգելված պտուղը, մերկացան փառքից, և Տերն անեծքով պատժելով մարդուն՝աքսորեց Դրախտից:

Վեցերորդ ժամանակաշրջանում Աստված սուրբ Կույսի անարատ արգանդում դարձավ կատարյալ Մարդ՝ հոգով, մտքով ու մարմնով, ոչպեսզի կատարի տնօրինական գործերը: Ավագ ուրբաթ օրը, ինչպես արդեն նշվեց, Տերը Հուդայի մատնությամբ ձերբակալվեց, ծեծի ու ծաղրի ենթարկվեց և ապա, Իր վրա վերցնելով Ադամի անեծքն ու դատապարտությունը, խաչի վրա մեռնելով, բացեց Իր կողը, և կողից բխած ջրով լվաց մարդու մեղքերը, իսկ բխած արյամբ մեզ գնեց չարի ծառայությունից (Մատթ. ԻԶ 47 - ԻԷ 56): Եվ ինչպես Ադամի կողից ստեղծվեց նրա կինը՝ Եվան, այդպես էլ Տիրոջ կողից ելավ Նրա հարսը՝ Եկեղեցին: Այսօր թեպետ ուրախություն է հոգիների համար, քանի որ Քրիստոսի չարչարանքներով մեր հոգիներն ազատվեցին դժողքից, սակայն մարմնապես սուգ է ու տրտմություն»:

Այս ամենն կատարում ենք բնության գրկում.

Սկսում են «էկեք ծեծենք սոխ ու սխտոր» պահքի ծիսական խաղերգով

Սաները ձեռքերին ունեն շշով ջուր, փոքրիկ բահ կամ հողը փխրեցնելու գործիք, ուռենու փոքր ճյուղ, գլխին՝ ուռենու ճյուղերից հյուսած պսակ: Բաժանվում են փոքր խմբերի, որոնք մաքրում են տարածքը, խոտածածկից ազատում ծառի տակի հողը, փխրեցնում, ջրում:

Գովք ծառի

Գովում են ծառին, ուռենու ճյուղով թեթև հարվածում և ասում. «Բերք տուր, թե չէ՝ կկտրեմ»:

Երգում և խաղում են «Խնկի ծառը ծաղկել է» երգը

Միասին ասում են

- **Զարդ, զարդ, Ծաղկազարդ, գարնան գովք ու զարդ, Ծաղկազարդ ու Ծառզարդար:**

Ծաղկազարդի օրվա մանկանց ծիսական երթը

Խմբերը բաժանվում են այցելող խմբի և «տանտերերի»: Այցելող խմբի սաների ձեռքերին կան ուռենու ճյուղեր, կարկաչաներ, ճեռեր, փոքրիկ դույլեր,սինի կամ զամբյուղ, ծիսական զարդարած ճյուղ: «Տանտերերի» խմբի սաների ձեռքերին հյուրասիրության համար կան ձվեր, չրեղեն, ընդեղեն, հատիկ (**«Հատիկ».** Խաշած ցորենը, սիսեռը, չամիչն ու շաքարահատիկները (կամ շաքարավազը) իրարխառնած):
Այցելող խումբը դիմում է տանտերերին.

- Ծառզարդա՛ր, Ծառզարդա՛ր, ձերտունէկանք, Ծառզարդա՛ր:

Ապա հերթով ասում են բարեմաղթանքներ, մանկական «զգուշացնող, վախեցնող» հղումներ.

- Ով մեր փայը տա՝ զիզի բարձին նստի:
- Ով էլ չտա՝ չոր քարին նստի:
- Ով մեր փայը տա՝ դալարի ,շեն մնա:
- Ով էլ չտա՝ սլարի, մուկն էլ իրենց թթուն ընկնի:
- Հատիկ տվեք էս օրվան, հավկիթ տվեք Զատկվան:

Երգում են «Կարկաչա» ծիսական երգը

«Տանտերերը», պատրաստած հյուրասիրությունը դնում են սինիների և դույլերի մեջ, երեխաները օրհնում են «տանտերերին» և նվիրում ուռենու օրհնված ճյուղեր, որոնց վերագրվում է չարխափան, առատացնող զորություն:
Դրանցով մեկը թեթև խփում է մյուսի մեջքին և ասում.

- Մեջքը տեղը, կամքը՝ տեղը:
- Քամու տեղ, սրտի դեղ:
- Թող բոլոր հիվանդությունները մեզանից հեռու մնան:

Նախօրոք պատրաստել ուռենու ճյուղով փաթաթած օղակ: Այդ օղակի միջով հերթով անցկացնել մանուկներին, որ առողջ լինեն, չհիվանդանան:

Կարևորվում է այն ոգևորությունը, ստեղծագործական մոտեցումը, որը կա տվյալ պահին, տվյալ խաղի մեջ: Խաղի մեջ սանը պետք է լինի ազատ, կատարի մանկանը բնորոշ անմիջականությամբ, ստեղծագործի, փոխի, փորձի այլ ձև, իր ձևը: ԵՎ իր ենթագիտակցության մեջ մշտապես պահպանի (իհարկե դաստիարակի և ընտանիքի անմիջական օգնությամբ, ազդեցությամբ) ազգայինը, ծիսականը և սերը բնության հանդեպ:Երեխաների մեջ պետք է ձևավորել ճանաչողական, բնապահպանական գիտելիքներ, էկոլոգիական գիտակցություն, հուզական, հոգատար, մարդասիրական վերաբերմունք՝բնության, շրջակա միջավայրի նկատմամբ, բնության հետ հաղորդակցվելու ունակություն, էկոլոգիական կուլտուրա: Ձևավորել ճանաչողական ունակություններ բուսական և կենդանական աշխարհի, բնության սեզոնային երևույթների մասին՝ հատկապես գարնան, գարնանը եղանակները տաքանում են , օրերը երկարում: Ձյունը հալչում է , ծառերը բողբոջում են, կանաչ խոտը դուրս է գալիս: Գարնան ավետաբեր առաջին ծաղիկները ձյան միջից բարձրացնում են իրենց գլխիկները, թռչունները վերադառնում են տաք երկրներից, դաշտերում սկսվում է գարնանացանը, բանջարանոցներում տնկում են բանջարեղեն, պարտեզներում՝ ծաղիկներ, անկենդան բնության վերաբերյալ, տալ պատկերացումներ դրանց փոխկապակցության մասին, մշակել շրջապատի նկատմամբ, հոգատար և գիտակցական վերաբերմունք, ձևավորել բնության մեջ ճիշտ վարքագծի դրսևորման սովորույթներ և հմտություններ:

Բնության մեջ և բնության հետ երեխայի կատարած աշխատանքը նրան առաջադրում է նպատակ և տալիս արդյունքին հասնելու հնարավորություն:

Սուրբ Զատիկ

Զատիկը հեթանոսական տոն լինելով՝ հիմնականում բնորոշում է բնության զարթոնքը: Նոր կյանքի սկիզբը խորհրդանշող ձուն, ինչպես և կենաց ծառը հին հայերը վերագրում էինմեռնող և հարություն առնող բնության աստծուն՝ Արային;Հետագայում այս տոնը քրիստոնեական օրացույցում արժեքավորվեց և կապվեց Հիսուս Քրիստոսի հարության հետ;

Արեն երկու հազարամյակ քրիստոնյա աշխարհի մարդիկ Սուրբ Զատիկի օրը իրար ավետում են.<<Քրիստոս հարյավ ի մեռելոց>>, <<Օրհնյալ է հարությունը Քրիստոսի>>:

Այս տոնակատարությունն իր մեջ ամփոփում է հայկական գեղեցիկ սովորույթներ, կենցաղային ավանդույթներ, անգամ՝ զուտ հայկական ուտեստների պատրաստման և հյուրասիրման տարրեր:Միջոցառման անցկացումը տևում է մեկ շաբաթ : Շաբաթվա ամեն մի օրը կոչվում է Ավագ և իմաստավորվում կոնկրետ գործով:Վերջնական տոնը՝ բուն Զատիկը կատարվում է շաբաթվա վերջում՝ կիրակի օրը:

Տոնակատարությունը և մեծերի և երեխաների համար է: Դրա հիմնական մասնակիցները դառնում են ծնողները և երեխաները:Տոնին նախապատրաստվելու համար նախապես երեխաները դաստիարակների օգնությամբ մատուցարանների մեջ ցանում են ցորեն: Դրա կանաչ ծիլերն օգտագործում են սպասք ձևավորելու և ածիկ պատրաստելու համար;

Ավագ երկուշաբթի՝ պատրաստում են զատիկի թեմաներով բացիկներ, կոլաժներ, նկարում են նկարներ;

Ավագ երեքշաբթի՝ զբոսանքի ժամանակ երեխաները մոտակա պուրակից բերում են ուռենու ճյուղեր տոնական զարդարանքների համար;

Ավագ չորեքշաբթի ՝ երեխաները մի քանի մայրիկների, դաստիարակի և խոհարարի հետ հետճաշիկից հետո խոհանոցում պատրաստում են հայկական կլոր գաթա, փոխինդ և հալվա:

Ավագ հինգշաբթի՝ հետճաշիկից հետո երեխաները մի քանի տատիկների և խոհարարի օգնությամբ թակիչով ծեծում են ծլած ցորենի ծիլերը, հյութը քամում, խառնում են ալյուրի շփոթին և դանդաղ խառնելով եփում են մեր ավանդական նախապապերի, նախատատերի սիրած կերեկրատեսակներից մեկը՝ ածիկը:

Ավագ ուրբաթ՝ ծնողներից մեկի հրավերով երեխաներն օրվա երկրորդ կեսին դաստիարակի ուղեկցությամբ այցելություն են կատարում:Տանը մասնակցում են խնոցի հարելու արարողությանը;Այդ ընթացքում երգում են<< Խնոցի, ջան խնոցի>>-ն և ստացված կարագն ու թանը վերցնելով վերադառնում են մանկապարտեզ;

Ավագ շաբաթ՝ օրը երեխաները ծնողի հրավերով և դաստիարակի ուղեկցությամբ այցելում են հացատուն ու ականատես լինում թոնրի մեջ հացի թխման արարողությանը:Նրանք երգում են << Լավաշ ենք թխում>>երգը, ճաշակում հյուրասիրած հացն ու պանիրը և վերցնելով լավաշները վերադառնում են մանկապարտեզ; Այդ օրը երեխաներն դաստիարակի օգնությամբ , սոխի կճեպներով և այլ նյութերով ներկում են խաշած ձվերը և նկարազարդում:

Թե մեծեը և թե փոքրերը անհամբեր սպասում են կիրակի օրվան ՝ Զատիկին:

Անհրաժեշտ է երեխաներին հասանելի կերպով տեղեկություն հաղոդել Սուրբ Զատիկի խորհուրդի վերաբերյալ:

Ավանդազրույց

Երբ Քրիստոսին խաչ հանեցին, մեռնեմ նրա զորությանը,մայրը դեռ չգիտեր այդ մասին: Նա գլխաշորի մեջ հաց, խաշած հավկիթ է դնում և բերում,որ որդին ուտի: Գալիս է տեսնում, որ խաչված է, և արյունը կաթիլ-կաթիլ ընկնում է նրա գամված ձեռքերից,ոտքերից և գլխի փշե պսակից: Մայրը խաչի տակ ծնկի է իջնում և հոնգուր-հոնգուր լաց լինում: Նրա արցունքները, խառնվելով տղայի արյանը, թափվում են գլխաշորին՝ արյուն-արցունքով ներկելով հացն ու հավկիթները: Հետո մայրը քանդում է կապոցն ու գլխաշորը գլխին կապում:

Դրանից հետո մարդիկ Ս. Զատիկի օրը հավկիթները կարմիր են ներկել: Հացն էլ պսակի պես հյուսված են թխել, վրան քնջութ ցանել՝ որպես խաչված Քրիստոսի պսակի փշեր: Կանայք էլ գլխաշոր կապած են եկեղեցի մտել:

ԵԶՐԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մանկապարտեզը համակողմանիորեն զարգացած մարդու ձևավորման, բարոյական և հոգևոր արժեքների միասնության ապահովման հենասյուներից մեկն է: Այստեղից երեխան իր հետ կյանք կտանի բարության, գեղեցկության, ուրախության և սիրո առաջին սերմերը:

Նման միջոցառումները մանկական հուզաշխարհում դառնում են վառ հիշողություն և ուղեկցում նրան ողջ կյանքի ընթացքում:

Հասկանալի է և բնական, որ հայկական ծեսերը և ազգային ավանդույթները կյանքի առաջընթացի և տեխնիկայի հարձուն զարգացման ժամանակաշրջանում աստիճանաբար դուրս են մղվում մեր կենսաձևից և արդիականությունից և տարիների ընթացքում դառնում են անցյալի հիշողություն:

Ցավալի է, բայց փաստ, որ այժմ արդեն շատ ու շատ ազգային գեղեցիկ տոներ ու ծիսակատարություններ անցել են մոռացության գիրկը՝ դառնալով միայն ավագ սերնդի հիշողությունը: Մանկավարժներիս նպատակը պետք է լինի, հնարավորության սահմաններում, մանկավարժական նոր մեթոդներով ու մոտեցումներով, թարմ մտահղացումներով, նորացված միջոցներով ՝ նոր սերնդի համար պահպանել ազգային, հայեցի, քրիստոնեական մտածելակերպը:Այս միջոցառումները, ինչպես նաև Համբարձումը և Վարդավառը սրտամոտ են երեխաներին: Դրանք հայեցի դաստիարակության և կրթության, գեղագիտական, բարոյական, ինչու չէ, նաև պատմական՝ անցյալն իմանալու, գնահատելու և սովորելու տեսակետից հրաշալի դասեր են: Հարստացնում են մանկական մաքուր ու ջինջ հոգեաշխարհը:

Գյուղերում շատ քիչ ընտանիքներում են պահպանվել իսկական խնոցի և թոնիր: Դրանք փոխարինվել են ժամանակակից սարքավորումներով:Դրանք փոխարինվել են ժամանակակից սարքավորումներով: Շատ կցանկանայի, որ դրանք կրեին պահպանողական բնույթ:Քանի որ վերոնշյալ տոնակատարությունների ժամանակ երեխաները այցելում են տներ՝ որպեսզի տեսնեն խնոցին և թոնիրը: Վաղ թե ուշ դրանք դառնալու են պատմություն և մտնեն թանգարան:Դրանով երեխաների հիշողության մեջ կմնան իրենց նախատատերի աշխատանքային կենցաղը:

Գրականության ցանկ

1. Մանկապարտեզի միջին խմբի (4-5 տարեկանների) կրթական համալիր ծրագիր
2. Տոնական ղողանջներ (Լ. Սմբատյան)
3. Հայ ժողովրդական տոները (Հ. Խառատյան)